

Կայացավ Գեղարքունիքի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստը

25.11.2015

Գեղարքունիքի մարզպետարանում կայացավ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Գեղարքունիքի մարզային հանձնաժողովի 2015 թվականի հերթական նիստը, որն անցկացվեց «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի եւ նրա մաս կազմող «Խտրականությունը ՉԻ՝ աշխատում» խորագրով քարոզարշավի շրջանակներում: Քննարկումը վարեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Հակոբյանը: Քննարկմանը մասնակցում էին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործատուներ:

Սոցիալական ձեռներեցության ցանցի մասին զեկույցով հնդես եկավ (LIFE) ծրագրի տնօրեն, Մելվ դը չիլդրեն՝ միջազգային կազմակերպության ներկայացուցիչ Ջինա Սարգիզովան: Իսկ «Լիարժեք կյանք» ՀԿ ամառային ներառական ճամբարի եւ ընթացիկ ծրագրերի մասին զեկույցեց «Լիարժեք կյանք» ՀԿ հանրային կապերի պատասխանատու Լուսինե Սարգսյանը: Նրա տեղեկացմամբ՝ քարոզարշավի նպատակն է՝ հասարակության լայն շրջանակներին եւ, մասնավորապես գործատուներին, ներկայացնել ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային եւ ստեղծագործական ներուժը, աջակցման պետական ծրագրերը, որոնցից կարող են օգտվել ինչպես գործատուները, այնպես էլ զբաղվածության կարիք ունեցող հաշմանդամները:

Քարոզարշավն իրականացվում է ՀՀ ողջ տարածքում եւ միավորում է ավելի քան 30 կազմակերպությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքները պաշտպանելու համար:

Ամփոփելով նիստը՝ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Հակոբյանը հավանություն տվեց մարզում իրականացված ծրագրերին եւ առաջարկեց հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանը ինտեգրելու գործընթացն էլ ավելի ակտիվացնել: